ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ֆ-21

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան «30» հունվարի, 2019թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ ՊՈԱԿ -ը, ի դեմս տնօրեն Պավել Ավետիսյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), «Հայ հնագիտության, ազգագրության և բանագիտության արդի և հեռանկարային զարգացման խնդիրներ» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված 373569500 (երեք հարյուր յոթանասուներեք միլիոն հինգ հարյուր վաթսունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար՝ ներառյալ ԱԱՀ-ն, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ Միջոցառում) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված առանձին Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. ՀՀ ԳԱԱ կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2. Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

2.2.3. ՀՀ ԳԱԱ գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2. Ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7. Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից մինչև 10 տոկոս շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում, ապա՝ կնքել համաձայնագիր,

2.4.8. իրականացնել Ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.9. Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ հնարավորությունը,

2.4.11. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.12. Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 373569500 (երեք հարյուր յոթանասուներեք միլիոն հինգ հարյուր վաթսունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և արվում են առաջարկություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավի-

ճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.4.Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.5.Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:

9.6.Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ նախագահություն	ՀՀ ԳԱԱ "Հնագիտության և ազգագրության ինստիտուտ" ՊՈԱԿ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24	ք. Երևան, Չարենցի 15
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/հ 900011024115	Հ/Հ 900018005240
ՀՎՀՀ 00005673	ՀՎՀՀ 1501503104
Նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան	Տնօրեն՝ Դավել Ավետիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ. S.	Կ. S.

Հավելված 1
«30» հունվարի 2019 թ.
N 15-21 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնության

Հայ հնագիտության, ազգագրության և բանագիտության արդի և հեռանկարային զարգացման խնդիրներ» ծրագրի

(ծրագրի անվանումը)

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի և ի դեմս ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ ՊՈԱԿ-ի տնօրեն Պավել Ավետիսյանի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «30» հունվարի 2019թ. N 15-21 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ 373569500 (երեք հարյուր յոթանասուներեք միլիոն հինգ հարյուր վաթսունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ նախագահություն	ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24	Ք. Երևան, Չարենցի 15
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	
Հ/հ 900011024115	ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 00005673	Հ/Հ 900018005240
	ՀՎՀՀ 1501503104
Նախագահ Ռ.Մարտիրոսյան	Տնօրեն՝ Պավել Ավետիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 2

«30» հունվարի 2019 թ.
N 15-21 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Հայ հնագիտության, ազգագրության և բանագիտության արդի և հեռանկարային զարգացման խնդիրներ» ծրագրի

1. **Աշխատանքի կատարման հիմքը՝** Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջե

2. **Աշխատանքի նպատակը՝** Ինստիտուտի ենթակառուցվածքի պահպանում և զարգացում, հնագիտության, ազգագրության, ազգաբանության, էթնոսոցիոլոգիայի, բանագիտության, վիմագրության, ֆիզիկական մարդաբանության, հնէակենսաբանության ոլորտներում հիմնարար և կիրառական հետազոտությունների կատարում, հնագիտական պեղումների, հուշարձանների բարեկարգման, ամրակայման աշխատանքների իրականացում, ազգագրական, բանագիտական գիտարշավների կազմակերպում՝ ՀՀ տարածքում, Արցախում և սփյուռքում, նյութական մշակութային արժեքների վերականգնում, անալիզների, ճարտարապետական չափագրությունների իրականացում, կադրերի պատրաստում և վերապատրաստում, գիտաժողովների կազմակերպում, ներհանրապետական և միջազգային գիտական համագործակցություն, արխիվի, գրականության թվանշայնացում, գիտական աշխատանքների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի պահպանում և թարմացում, գիտական հետազոտությունների հրատարակություն:

3. **Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները.**

Գիտական պատշաճ մակարդակով և սահմանված ժամկետում կատարել ծրագրով նախատեսված աշխատանքները:

Սահմանված ժամկետի ավարտին ներկայացնել գիտական հաշվետվությունը:

Ամբողջ ծրագրի կատարման ընթացքում ներկայացնել հրատարակության պատրաստ ուսումնասիրությունները:

Ծրագրի շրջանակներում կատարվող թեմաները և գիտական միջոցառումները պետք է նպաստեն գիտության տվյալ ոլորտի առաջընթացին, լինեն արդիական:

Ըստ հնարավարին թարմացնել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան:

Ծրագրի շրջանակներում զարգացնել միջազգային գիտական համագործակցությունը:

Ծրագրի կատարման աշխատանքներում ընդգրկել երիտասարդ կադրերի:

Հրատարակության ներկայացնել համակողմանի քննարկված և բանախոսների դրական եզրակացությամբ գիտական ուսումնասիրություններ:

4. **Աշխատանքի բովանդակությունը.**

"Հայ հնագիտության, ազգագրության և բանագիտության արդի և հեռանկարային զարգացման խնդիրներ" ծրագրի շրջանակներում 2019 թվականի համար նախատեսված ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքները ներառելու են հետևյալ բաղադրիչները.

Ա/ Հիմնարար և կիրառական հետազոտություններ: Բ/ Դաշտային հնագիտական հետազոտություններ (պեղումներ), ազգագրական և բանահյուսական հավաքչական

գիտարշավներ: Գ/ Մշակութային արժեքների վերականգնում, վավերագրում և թանգարանացում: Դ/ Անալիտիկ լաբորատոր հետազոտություններ: Ե/ Գեոդեզիական քարտեզագրական և ճարտարապետական չափագրական աշխատանքներ: Զ/ Արխիվային նյութերի մշակում և ուսումնասիրություն: Է/ Միջազգային համագործակցություն: Ը/ Գիտական ուսումնասիրությունների հրատարակում: Թ/ Կաղրերի պատրաստում և վերապատրաստում: Ժ/ Գիտաժողովների, սեմինարների և կլոր սեղանների կազմակերպում: ԺԱ/ Ամառային դպրոցների կազմակերպում: ԺԲ/ Հնագիտական տեղեկատվական համակարգի լրամշակում: ԺԳ/ Ինտերնետային կայք: ԺԴ/ Գրադարանի համլրում: ԺԵ/ Հնագիտական հանգրվանների ընթացիկ վերանորոգում /Արտաշատ, Արմավիր, Դվին/: ԺԶ/ Ինստիտուտի հիմնական և օժանդակ շենքերի ընթացիկ վերանորոգում: ԺԷ/ Պեղվող հուշարձանների պահպանության կազմակերպում, կոնսերվացման և թանգարանացման աշխատանքներ:

<u>Ա. Հիմնարար և կիրառական հետազոտություններն</u> իրականացվելու են

10 ենթածրագրերով, որոնք իրենց հերթին ներառում են ինստիտուտի գիտական անձնակազմի անհատական և խմբային թեմաները:

1. Հնագիտության բնագավառում հիմնարար հետազոտությունները կատարվելու են «Հնագույն և Հին Հայաստան: Հնագիտական սկզբնաղբյուրների պեղումներ և ուսումնասիրություն», «Քարաշամբի դամբարանադաշտի պեղումներ և ուսումնասիրություն», ենթածրագրերով: Գիտահետազոտական աշխատանքների նպատակն է լինելու՝ Ա/ Վեր հանել լեռնաշխարհի բնակեցման սկզբնափուլերի առանձնահատկությունները, Բ/ ուսումնասիրել վաղագույն երկրագործական մշակույթների ի հայտ գալու, երկրագործ և անասնապահ հնագույն հասարակությունների տարածման առանձնահատկությունները, Արաքսից հյուսիս ընկած տարածքների յուրացման հիմնական փուլերը, Գ/ կոմպլեքսային հասարակություններին բնորոշ հասարակական ու սոցիալական ինստիտուտների կայացման գործընթացները, վաղագույն պետական կազմավորումների սաղմնավորման ու զարգացման հիմնական օրինաչափություններն ու առանձնահատկությունները, տնտեսության ոլորտում կատարված խոշորամասշտաբ փոփոխությունները, Դ/ համակողմանի ուսումնասիրվելու են վերջին տարիներին Հին Հայաստանի մայրաքաղաքների պեղումներից հայտնաբերված նյութերն ու տվյալները՝ Վանի թագավորության շրջանից մինչև քրիստոնեության տարածումը: Ե/ Միջնադարյան Հայաստանի տարբեր հնավայրերի և Դվին մայրաքաղաքի պեղումների արդյունքների ուսումնասիրությամբ ցույց են տրվելու քրիստոնեական քաղաքակրթության խոշորագույն կենտրոններից մեկի ձևավորման և պատմա-մշակութային զարգացման առանձնահատկությունները:

Նախատեսված ուսումնասիրությունների աղբյուրագիտական հենքն ապահովելու համար իրականացվելու են դաշտային հետազոտություններ՝ 20 հնագիտական արշավախմբերով: Ենթածրագրերի շրջանակներում շարունակվելու են արտերկրի գիտական կենտրոնների հետ համատեղ իրականացվող նախատեսված հետազոտությունները: Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպվելու են նախորդ տարիներին և 2019թ. հայտնաբերված մշակութային արժեքների անալիտիկ լաբորատոր հետազոտություններ, վերականգնում, վավերագրում և թանգարանացում, հուշարձանների գեոդեզիական քարտեզագրական և ճարտարապետական չափագրական աշխատանքներ:

2. «Դիվան հայ վիմագրության պրակների կազմում և հրատարակություն» ենթածրագրով շարունակվելու են Դիվան հայ վիմագրության Արմավիրի և Արագածոտնի պրակները կազմելու և հրատարակության պատրաստելու աշխատանքները:

3. Ազգագրության, ազգաբանության, էթնոսոցիոլոգիայի բնագավառներում հետազոտությունները կատարվելու են «Ավանդականը և նորը հայոց մշակույթում. պահպանման և զարգացման խնդիրներ», «Առօրեականությունը անցյալում և ներկայում. մարդաբանական ուսումնասիրություն», «Կիրառական ազգագրություն», «Սոցիալ-մշակութային գործընթացները Հայաստանում (ավանդույթ և արդիականություն)» ենթածրագրերով: Ուսումնասիրությունները տարվելու են՝ ա/ Հայոց նյութական ու հոգևոր մշակութային ժառանգության ավանդական ազգագրական ուսումնասիրություն, բ/ Արդի էթնոմշակութային և հասարակական գործընթացների ուսումնասիրություն, գ/ Արխիվային նյութերի ու վավերագրերի նախապատրաստում հրատարակության, դ/ Հիշողության մարդաբանություն, ե/ Հայաստանի սոցիալական շարժումների մարդաբանական ուսումնասիրություն, Տոնի մարդաբանություն, Զ/ Հայաստանի քաղաքների մարդաբանական ուսումնասիրություն, Է/ Ենթաէթնիկ և սոցիալական խմբերի մարդաբանական ուսումնասիրություն, Ը/ Վիզուալ մարդաբանական ուսումնասիրությունների համար շտեմարանի կազմում, Թ/ Աշխատանքային միգրացիայի սոցիալ-մշակութային փոխակերպումները Հայաստանում և մի շարք այլ ուղղություններով:

4. Բանահյուսության բնագավառում հետազոտությունները կատարվելու են «Հայ բանահյուսություն: Համեմատական և տիպաբանական ուսումնասիրություններ», «Հայկական հրաշապատում հեքիաթների հիմնական մոտիվների ու դիպաշարերի զուգադրական ուսումնասիրություն» ենթածրագրերով: Հետազոտությունների հիմնական նպատակն է բանահյուսական նյութերի պարբերաբար գրառումները, համակարգումը, արխիվավորումը (տեղբանկի ստեղծումը), համահավաք գիտական բնագրերի հրատարակումը, ուսումնասիրումը, Սասնա ծռերի անտիպ պատումների և հայ հմայական և ժողովրդական աղոթքների բանահավաքների կազմում և հրատարակում, հայ ժողովրդական հեքիաթների նշանացանկի կազմումը, "Հայ ժողովրդական հեքիաթներ" մատենաշարով նախատեսված Մոկքի և Պարսկահայքի հեքիաթների հերթական հատորների հրատարակության նախապատրաստումը:

5. Շարունակվելու են 2012 թվականից սկսված «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. Ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» ենթածրագրով նախատեսված հետազոտությունները:

6. Շարունակվելու են ինստիտուտի արխիվում պահվող բանագիտական նյութերի մշակման և հրատարակության պատրաստման աշխատանքները:

7. Ազգագրական և բանահյուսական նյութեր հավաքելու նպատակով ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպվելու են ազգագրական և բանահավաքչական գիտարշավներ Հայաստանի տարբեր շրջաններում և Արցախում:

8. Շարունակվելու են հնագիտության, ազգագրության, բանահյուսության բնագավառներում ձեռք բերված արդյունքներին ու հեռանկարային զարգացումներին վերաբերվող միջազգային, հանրապետական գիտաժողովների կազմակերպման աշխատանքները:

Գ-Ե/ Ինստիտուտի կողմից կազմակերպվող դաշտային հետազոտությունները պարտադիր ենթադրում են հայտնաբերված <u>մշակութային արժեքների վերականգնում, վավերագրում և թանգարանացում, գտածոների անալիտիկ լաբորատոր հետազոտություններ, հնավայրերի գեոդեզիական քարտեզագրական և ճարտարապետական չափագրական աշխատանքներ:</u>

Զ/ Արխիվային նյութերի մշակում և ուսումնասիրություն:

Տարիների ընթացքում ինստիտուտում ձևավորվել է ազգագրական և բանահյուսական հարուստ արխիվ: Արխիվը պարունակում է ինպես, մինչև առաջին համաշխարհային պատերազմը Հայաստանի (Թուրքիայի արևելյան նահանգների) բնակչության, մշակույթի առանձին տարրերին վերաբերվող լուսանկարչական և այլ արխիվային փաստաթղթերի հավաքածու, այնպես էլ Կովկասյան և առաջավորասիական մշակույթների վերաբերյալ կարևոր գիտական նյութեր: Ծրագրով նախատեսված աշխատանքները տարվելու են երկու ուղղությամբ՝ 1. արխիվում առկա կարևորագույն նյութերի հրատարակության նախապատրաստում: 2. Արխիվի թվայնացում:

Է/ Միջազգային համագործակցություն:

Ծրագրի շրջանակներում շարունակվելու են արտերկրի գիտական կենտրոնների հետ համատեղ իրականացվող դաշտային հնագիտական ուսումնասիրությունները: Արտերկրի տարբեր գիտական կենտրոնների հետ իրականացվող դաշտային հետազոտական ծրագրերի շրջանակներում ընթացիկ տարում կկազմավորվեն են 14 համատեղ հնագիտական արշավախմբեր:

Ը/ Գիտական ուսումնասիրությունների հրատարակություն:

Ծրագրի կատարման կարևորագույն արդյունքները նախատեսվում է հրատարկել ինստիտուտի ֆինանսական միջոցներով: 2019 թ. համար ծրագրվել է հրատարակել "ՀԱԻ աշխատություններ" գիտական հոդվածների ժողովածուի 2-հատոր, 4 մենագրություն: Միաժամանակ հոդվածներ և մենագրություններ կհրատարակվեն արտերկրում՝ օտար լեզուներով:

Թ/ Գիտաժողովների, կլոր սեղանների, սեմինարների կազմակերպում

Ծրագրի շրջանակներում 2019 թվականին ինստիտուտը կկազմակերպի 2 միջազգային և 2 հանրապետական գիտաժողով նվիրված Հայաստանի և հարակից երկրների հնագիտության, ազգաբանության, բանագիտության հիմնախնդիրներին: Գիտաժողովների նյութերը առանձին ժողովածուներով կհրատարակվեն: Նախատեսվում է շարունակել ամառային դպրոցների և մեթոդաբանական սեմինարների կազմակերպման պրակտիկան:

Շարունակվելու են հնագիտական տեղեկատվական շտեմարանի ստեղծման աշխատանքները:

Ծրագրով նախատեսված հետազոտությունների մի զգալի մասը կարող են գործնական և կիրառական նպատակներին ծառայել՝ մասնավորապես զբոսաշրջության խթանման և կազմակերպման, պատմամշակութային ժառանգության պահպանության և հանրահռչակման, հայոց ժամանակակից տոնա-ծիսական համակարգը գիտական հիմքերով կանոնակարգելու, արդի էթնոմշակութային և էթնոսոցիալական գործընթացների դինամիկան և իրական ծավալները պատկերացնելու և ըստ այդմ կառավարման ու ցանկալի հունով ուղղորդելու քաղաքականության մշակման տեսանկյուններից:

Տնօրեն՝ _____ Պավել Ավետիսյան
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ Պավել Ավետիսյան
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված 3
«30» հունվարի 2019թ.
N 2-21 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

«Հայ հնագիտության, ազգագրության և բանագիտության արդի և հեռանկարային զարգացման խնդիրներ» ծրագրի
(ծրագրի անվանումը)

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	անվանումը	համառոտ բովանդակություն	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	Կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
	Գիտահետազոտական և գիտակազմակերպչական աշխատանքներ՝ I-փուլ	Ա/Ծրագրով ընթացիկ տարվա համար նախատեսված ենթածրագրերի և թեմաների կատարում և արդյունքների քննարկում, Բ/ 2018թ. պեղումների գիտական հաշվետվությունների կազմում և քննարկում, Գ/Մշակութային արժեքների վերականգնում, վավերագրում և թանգարանացում, Դ/Անալիտիկ լաբորատոր հետազոտություններ, Ե/Արխիվային նյութերի մշակում և ուսումնասիրություն. Զ/Գիտական ուսումնասիրությունների հրատարակում, Է/Կադրերի պատրաստում և վերապատրաստում, Ը/ սեմինարների և կլոր սեղանների կազմակերպում, Թ/Ինտերնետային կայքի թարմացում, ԺԱ/ Դաշտային հնագիտական հետազոտություններ /պեղումներ/, ազգագրական և բանահյուսական հավաքչական գիտարշավներ, ԺԲ/ Գեոդեզիական քարտեզագրական և ճարտարապետական չափագրական աշխատանքներ, ԺԳ/ Ենթակառուցվածքի պահ-	Գիտական հետազոտություններ, տվյալների համակարգում, համակարգչային մշակում և վերլուծություն, հնագիտական նյութերի վերականգնում, լաբորատոր անալիզներ, գիտական ուսումնասիրությունների արդյունքների քննարկում, ուսումնասիրությունների՝ հրատարակության նախապատրաստում, տեքստերի կազմում, նյութերի թվայնացում, կայքի գործարկում, գիտաժողովների կազմակերպում, նյութական և ոչ նյութա-	Գիտական հրատարակություններ, մշակութային արժեքների գիտական նկարագրություն, վերականգնում, թանգարանացում, Ճարտարապետական չափագրություններ, մշակութային արժեքների լուսանկարներ, գրչանկարներ, գեոդեզիական հանույթներ, քարտեզներ: Արդյունքների գնահատման չափանիշներն են՝ գիտության ժամանակակից պահանջներին, մեթոդներին ու մեթոդաբանությանը համապատասխան ուսումնասիրությունների աղբյուրագիտական հենքի ստեղծումը, դասակարգումը և գիտական նկարագրությունը, որոնք հիմք են	2019 թ. հունվար-հունիս	168106,3 (ներառյալ ԱԱՀ-ն)

		պանության և բնականոն գործունեության ապահովման ընթացիկ աշխատանքներ: Դվին, Արտաշատ և Արենի 1 հնավայրերի բարեկարգման, ամրակայման ծրագրի իրականացում:	կան մշակութային ժառանգության դաշտային ուսումնասիրություն՝ պեղումների և գիտարշավների կազմակերպում	ծառայելու նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների, հուշարձանների պահպանության, արժևորման, հանրահռչակման, նույնականացման, զբոսաշրջության նպատակներով օգտագործման, դասագրքերի ստեղծման, հեռուստատեսային հաղորդումների, ֆիլմերի ստեղծման, ավանդական կենցաղի, ավանդությունների, էպիկական ժառանգության, ֆոլկլորի պահպանության, ազգային ինքնության պահպանության, հայոց քաղաքակրթության հիմնական բաղադրատարրերի հիմնավորման համար:		
	Գիտահետազոտական և գիտակազմակերպչական աշխատանքներ՝ II-փուլ	Ա/ 1.«Հնագույն և Հին Հայաստան: Հնագիտական սկզբնաղբյուրների պեղումներ և ուսումնասիրություն», 2.«Քարաշամբի դամբարանադաշտի պեղումներ և ուսումնասիրություն», 3.«Դիվան հայ վիմագրության պրակների կազմում և հրատարակություն», 4.«Ավանդականը և նորը հայոց մշակույթում. պահպանման և զարգացման խնդիրներ», 5.«Առօրեականությունը անցյալում և ներկայում. մարդաբանական ուսումնասիրություն», 6.«Կիրառական ազգագրություն», 7.«Սոցիալ-մշակութային գործընթացները Հայաստանում (ավանդույթ և արդիականություն)» 8.«Հայ բանահյուսություն: Համեմատական և տիպաբանական ուսումնասիրություններ», 9.«Հայկական հրաշապատում հեքիաթների հիմնական մոտիվների ու դիպաշարերի զուգադրական ուսումնասիրություն» 10.«Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական	Գիտական հետազոտություններ, տվյալների համակարգում, համակարգչային մշակում և վերլուծություն, հնագիտական նյութերի վերականգնում, լաբորատոր անալիզներ, գիտական ուսումնասիրությունների արդյունքների քննարկում, ուսումնասիրությունների՝ հրատարակության նախապատրաստում, տեքստերի կազմում, նյութերի թվայնացում, կայքի գործարկում, գիտաժողովների կազմակերպում, նյութական և ոչ նյութական	Գիտական հրատարակություններ, մշակութային արժեքների գիտական նկարագրություն, վերականգնում, թանգարանացում, Ճարտարապետական չափագրություններ, մշակութային արժեքների լուսանկարներ, գրչանկարներ, գեոդեզիական հանույթներ, քարտեզներ: Արդյունքների գնահատման չափանիշներն են՝ գիտության ժամանակակից պահանջներին, մեթոդներին ու մեթոդաբանությանը համապատասխան ուսումնասիրությունների աղբյուրագիտական հենքի ստեղծումը, դասակարգումը և գիտական նկարագրությունը, որոնք հիմք են	2019թ. հուլիս-դեկտեմբեր	205463,2 (ներառյալ ԱԱՀ-ն)

		ուղղությունները. Ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» ենթածրագրերի կատարման ընթացիկ հաշվտվությունների նախապատրաստում և քննարկում: Բ/ Մշակութային արժեքների վերականգնում, վավերագրում և թանգարանացում, Դ/Անալիտիկ լաբորատոր հետազոտություններ, Ե/Արխիվային նյութերի մշակում և ուսումնասիրություն. Զ/Գիտական ուսումնասիրությունների հրատարակում, Է/Կադրերի պատրաստում և վերապատրաստում, Ը/ Գիտաժողովների, սեմինարների և կլոր սեղանների կազմակերպում, Թ/ Ինտերնետային կայքի գործարկում և թարմացում, ԺԱ/ Դաշտային հնագիտական հետազոտություններ /պեղումներ/, ազգագրական և բանահյուսական հավաքչական գիտարշավներ, ԺԲ/ Գեոդեզիական քարտեզագրական և ճարտարապետական չափագրական աշխատանքներ, ԺԳ/Ենթակառուցվածքի պահպանության և բնականոն գործունեության ապահովման ընթացիկ աշխատանքներ: ԺԴ/ գիտաժողովների կամակերպում:	մշակութային ժառանգության դաշտային ուսումնասիրություն՝ պեղումների և գիտարշավների կազմակերպում	ծառայելու նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների, հուշարձանների պահպանության, արժևորման, հանրահռչակման, նույնականացման, զբոսաշրջության նպատակներով օգտագործման, դասագրքերի, հեռուստատեսային հաղորդումների, ֆիլմերի ստեղծման, ավանդական կենցաղի, ավանդությունների, էպիկական ժառանգության, ֆոլկլորի պահպանության, ազգային ինքնության պահպանության, հայոց քաղաքակրթության հիմնական բաղադրատարրերի հիմնավորման համար:		
Ընդամենը՝ 373569500 դրամ (ներառյալ ԱԱՀ-ն)						

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

(ստորագրություն)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Տնօրեն՝ Պ. Ավետիսյան

(ստորագրություն)

Հավելված 4
«30» 01 2019 թ.
N Հ-21 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Հայ հնագիտության, ազգագրության և բանագիտության արդի և հեռանկարային զարգացման խնդիրներ» ծրագրի
(ծրագրի անվանումը)

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	242387000	60596750	60596750	60596750	60596750
2	տնտեսական և այլ ծախսեր*	68920917	1664833	17230229	17230229	32795625
Ընդամենը (առանց ԱԱՀ)		311307917	62261584	77826979	77826979	93392375
ԱԱՀ		62261583	12452316	15565396	15565396	18678475
ԸՆԴԱՄԵՆԸ		373569500	74713900	93392375	93392375	112070850

Կազմակերպության տնօրեն՝ _____ *(ստորագրություն)* (Պավել Ավետիսյան) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ *(ստորագրություն)* (Լիանա Առուստամյանց) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը*

Հավելված 5
«30» հունվարի 2019թ.
N Գ-21 պայմանագրի

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

"Հայ հնագիտության, ազգագրության և բանագիտության արդի և հեռանկարային զարգացման խնդիրներ" ծրագրի

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալն առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	8290,0
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*3000,0*
	գազի ծառայություն	*3700,0*
	ջրամատակարարման ծառայություն	*300,0*
	կապի ծառայություն	*1200,0*
	աղբահանություն	*90,0*
2	Գույք	1000,0
3	Սարքեր և սարքավորումներ	1500,0
4	Նյութեր	3000,0
5	Գործուղումներ	2500,0
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	2600,0
8	Արշավախմբեր, գիտարշավներ, այդ թվում՝	47000,0
	Գիշերավարձ, օրապահիկ, ճանապարհածախս	12000,0
	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը՝ պեղումներում ընդգրկված բանվորների, դաշտային հետազոտական ծրագրերում և նյութերի մշակման, վերականգնման, վավերագրման աշխատանքներում ընդգրկված մասնագետների	35000,0
9	Հրատարակման ծախսեր	2900,0
10	Այլ ծախսեր	130,9
Ընդամենը		68920,9

Կազմակերպության տնօրեն՝ _____ Պ. Ավետիսյան
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝ _____ Լ. Առուստամյանց
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կ.Տ.

Հավելված 6
«30» 01 2019 թ.
N 421 պայմանագրի

Համաձայն եմ՝ _____ ՀՀ ԳԱԱ Նախագահ՝
(ստորագրություն) **Ռաֆիկ Մարտիրոսյան**

Կ.Տ.

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
"Հայ հնագիտության, ազգագրության և բանագիտության արդի և հեռանկարային զարգացման խնդիրներ" ծրագրի

	ազգանուն, անուն, հայրանուն	պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձի չափը, ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ)
1.	Ավետիսյան Պավել Սեդրակի	տնօրեն, առ.գ.ա.	պ.գ.դ.	280.0
2.	Սարգսյան Գագիկ Գվիդոնի	Տն. տեղակալ, ավ.գ.ա.	պ.գ.թ.	230.0
3.	Պետրոսյան Իզաբելլա Աշոտի	տն.օգնակ.- քարտուղ.		100.0
4.	Առուստամյանց Լիանա Լորենցի	գլխ.հաշվապ.		200.0
5.	Մեսրոպյան Կարինե Սերյոժայի	հաշվապահ		160.0
6.	Մելիքյան Ռոզա Հայրապետի	հաշ.-գանձ.		100.0
7.	Սանթուրյան Ժանետա Վիկտորի	կադր. տեսուչ		150.0
8.	Ավետիսյան Արտակ Սեդրակի	Գործ. կառավ		150.0
9.	Հարությունյան Սարգիս Բարդուղիմեոսի	բաժ. վար, գ.գ.ա	բ.գ.դ.	160.0
10.	Աբրահամյան Լևոն Հմայակի	բաժնի վարիչ, գ.գ.ա	պ.գ.թ.	160.0
11.	Բաղալյան Ռուբեն Սերգեյի	բաժնի վարիչ, առ.գ.ա	պ.գ.դ.	160.0
12.	Հայրապետյան Թամար Լազարի	բաժնի վարիչ, առ.գ.ա.	բ.գ.դ.	160.0
13.	Գալստյան Միհրան Վարդգեսի	բաժնի վարիչ, առ.գ.ա.	պ.գ.դ.	160.0
14.	Կարապետյան Ռուբեն Սուրենի	բաժնի վարիչ, առ.գ.ա.	պ.գ.դ.	160.0
15.	Զարդարյան Մկրտիչ Հովհաննեսի	բաժնի վարիչ, ավ.գ.ա.	պ.գ.թ.	160.0
16.	Մելքոնյան Հուսիկ Անդրեասի	բաժնի վարիչ, ավ.գ.ա.	պ.գ.թ.	160.0
17.	Հոբոսյան Սուրեն Գևորգի	բաժնի վարիչ, ավ.գ.ա.	պ.գ.թ.	160.0
18.	Խառատյան Հրանուշ Սերգեյի	խմբի ղեկ., առ.գ.ա.	պ.գ.թ.	130.0
19.	Պետրոսյան Էմմա Խաչատուրի	խմբի ղեկ., առ.գ.ա..	պ.գ.դ.	130.0
20.	Սիմոնյան ԼիլիթԴիմիտրիի	Արխիվ. վար., ավ.գ.ա.	պ.գ.թ.	120.0
21.	Մանուկյան Լիլիթ Հարությունի	լաբ. վարիչ		120.0
22.	Հակոբյան Սեդրակ Բաբկենի	խմբի ղեկավար	կ.գ.թ.	100.0
23.	Մովսիսյան Նաիրա Ալբերտի	գրադ.վարիչ		120.0
24.	Մարության Հարություն Տիրանի	գլխ.գ.ա.	պ.գ.դ.	80.0
25.	Պետրոսյան Արմեն Եղիշի	գլխ.գ.ա.	բ.գ.դ.	160.0
26.	Սվազլյան Վերժինե Գառնիկի	առաջ. գիտաշխ.	բ.գ.դ.	130.0
27.	Չոլաքյան Հակոբ Մարտայի	առաջ. գիտաշխ.	պ.գ.դ.	130.0
28.	Գրեկյան Երվանդ Համբարձումի	առաջ. գիտաշխ.	պ.գ.դ.	130.0
29.	Բոբոխյան Արսեն Ալեքսանդրի	առաջ. գիտաշխ.	պ.գ.թ.	130.0

30.	Թադևոսյան Աղասի Զավենի	առաջ. գիտաշխ.	պ.գ.թ.	130.0
31.	Շագոյան Գայանե Հարությունի	առաջ. գիտաշխ.	պ.գ.թ.	130.0
32.	Հարությունյան Սերյոժա Վռամի	առաջ. գիտ. աշխ.	պ.գ.թ.	72.5
33.	Պետրոսյան Լևոն Աղասու	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	120.0
34.	Գևորգյան Արամ Ցոլակի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	120.0
35.	Երիցյան Բենիկ Գուրգենի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	120.0
36.	Դևեջյան Սեդա Հրանտի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	120.0
37.	Հմայակյան Սիմոն Գևորգի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	120.0
38.	Թումանյան Գարեգին Սահակի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	120.0
39.	Ենգիբարյան Նորա Գրիգորի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	120.0
40.	Հովսեփյան Ռոման Աղասու	ավագ գիտաշխ.	կ.գ.թ.	120.0
41.	Խուդավերդյան Անահիտ Յուրիի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	120.0
42.	Խնկիկյան Օնիկ Սարգսի	ավագ գիտաշխ.	պ.գ.դ.	120.0
43.	Քոչարյան Գայանե Գրիգորի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	120.0
44.	Կարապետյան Ինեսա Աշոտի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	120.0
45.	Մարգարյան Հասմիկ Զաքարի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	120.0
46.	Կանեցյան Ամինա Գուրգենի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	120.0
47.	Բաբայան Ֆրինա Սուրենի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	120.0
48.	Ժամկոչյան Աղավնի Սիզեֆրոնի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	120.0
49.	Հակոբյան Նյուրա Գևորգի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	120.0
50.	Հարությունյան Արսեն Էդուարդի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	120.0
51.	Սարգսյան Համլետ Գրիգորի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	120.0
52.	Դաբաղյան Արտակ Արտաշի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	120.0
53.	Շահնազարյան Նոնա Ռոբերտի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	120.0
54.	Պողոսյան Սվետլանա Հայկի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	72.5
55.	Բոյաջյան Վահե Սուրենի	ավագ գիտաշխ.	բ.գ.թ.	120.0
56.	Օհանջանյան Ռուբեն Սամվելի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	120.0
57.	Վարդանյան Սվետլանա Ավետիսի	ավագ գիտաշխ.	բ.գ.թ.	120.0
58.	Սարգսյան Արմեն Շավարշի	ավագ գիտաշխ.	բ.գ.դ.	130.0
59.	Խեմչյան Եսթեր Հայկի	ավագ գիտաշխ.	բ.գ.թ.	120.0
60.	Դալալյան Տորք Սամվելի	ավագ գիտաշխ.	բ.գ.թ.	120.0
61.	Հակոբյան Արսեն Աշոտի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	120.0
62.	Մելիքյան Գոհար Էդուարդի	ավագ գիտաշխ.	բ.գ.թ.	120.0
63.	Բաղդասարյան Միլենա Վլադիմիրի	ավագ գիտաշխ.	Սոց.գ.թ.	120.0
64.	Ավետիսյան Հայկ Գրիգորի	ավագ գիտաշխ.	պ.գ.դ.	60.0
65.	Ղարիբյան Իգիթ Գարեգինի	ավագ գիտաշխ.	պ.գ.դ.	60.0
66.	Պետրոսյան Համլետ Լենսերի	ավագ գիտաշխ.	պ.գ.դ.	60.0
67.	Մանուչարյան Աշոտ Գագիկի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	60.0
68.	Գաբրիելյան Մխիթար Ռազմիկի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	60.0
69.	Մկրտչյան Սամվել Սուրենի	ավագ գիտաշխ.	պ.գ.դ.	60.0
70.	Սահակյան Վեներա Շատերի	ավ. գիտ. աշխ.	պ.գ.թ.	72.8
71.	Գասպարյան Բորիս Զարեյի	գիտաշխատող		115.0
72.	Մելիքյան Վարդուհի Վոլոդյայի	գիտաշխատող		115.0
73.	Փալանջյան Ռուզան Սուրենի	գիտաշխատող	պ.գ.թ.	110.0
74.	Բաբաջանյան Աստղիկ Ալեքսանդրի	գիտաշխատող	պ.գ.թ.	110.0
75.	Միրիջանյան Դիանա Հրաչյայի	գիտաշխատող	պ.գ.թ.	110.0
76.	Հակոբյան Հայկ Երջանիկի	գիտաշխատող	պ.գ.թ.	110.0
77.	Աղանյան Գրիգոր Թորգոմի	գիտաշխատող		105.0
78.	Խառատյան Լուսինե Զավենի	գիտաշխատող		110.0

79.	Այվազյան Գրիգորի Գենադիի	գիտաշխատող	պ.գ.թ.	110.0
80.	Ստեփանյան Գոհար Յուրիի	գիտաշխատող	պ.գ.թ.	110.0
81.	Մելքումյան Համլետ Լորիկի	գիտաշխատող	պ.գ.թ.	115.0
82.	Պողոսյան Ալինա Սամվելի	գիտաշխատող	պ.գ.թ.	110.0
83.	Գրիգորյան Հասմիկ Գրիշայի	գիտաշխատող	պ.գ.թ.	110.0
84.	Աբրահամյան Հասմիկ Աբելի	գիտաշխատող	պ.գ.թ.	110.0
85.	Զաքարյան Թամար Զաքարի	գիտաշխատող		110.0
86.	Մկրտչյան Սաթենիկ Սոկրատի	գիտաշխատող	մ.գ.թ.	110.0
87.	Ղռեջյան Լուսինե Խաչատուրի	գիտաշխատող	բ.գ.թ.	110.0
88.	Վարդանյան Սերգեյ Գագիկի	գիտաշխատող		110.0
89.	Գևորգյան Թամար Հայրապետի	գիտաշխատող		50.0
90.	Քալանթարյան Իրենա Արամի	գիտաշխատող		115.0
91.	Հարությունյան Արմինե Արամայիսի	գիտաշխատող		115.0
92.	Պետրոսյան Արթուր Ալֆրեդի	գիտաշխատող		115.0
93.	Ծատուրյան Ռուզաննա Արտակի	գիտաշխատող		115.0
94.	Նալբանդյան Կարինե Գեորգիի	գիտաշխատող		105.0
95.	Մարգարյան Լևոն Նիկոլի	գիտաշխատող	պ.գ.թ.	110.0
96.	Մարգարյան Նիկոլ Մերուժանի	գիտաշխատող	պ.գ.թ.	100.0
97.	Հարությունյան Հասմիկ Թելմանի	գիտաշխատող	պ.գ.թ.	72.8
98.	Գալստյան Նարեկ Միհրանի	գիտաշխատող	պ.գ.թ.	50.0
99.	Վարդանյան Նվարդ Խաչատուրի	գիտաշխատող	բ.գ.թ.	50.0
100.	Հայրիյան Լուսինե Վլադիմիրի	գիտաշխատող	բ.գ.թ.	100
101.	Վարդանեսովա Տատյանա Վլադիմիրի	գիտաշխատող	պ.գ.թ.	50.0
102.	Ջուհարյան Ալեքսան Կարենի	գիտաշխատող	պ.գ.թ.	50.0
103.	Երանյան Նժդեհ Աշոտի	գիտաշխատող	պ.գ.թ.	110.0
104.	Աթանեսյան Գարիկ Հրահատի	գիտաշխատող	պ.գ.թ.	110.0
105.	Խեմչյան Մարինե Հայկի	գիտաշխատող	բ.գ.թ.	110.0
106.	Ասատրյան Հռիփսիմե Գարիկի	գիտաշխատող.	պ.գ.թ.	110.0
107.	Գուլյան Արա Մկրտիչի	գիտաշխատող		50.0
108.	Գասպարյան Ռուբեն Ռաֆիկի	գիտաշխատող		100.0
109.	Տիրացյան Նվարդ Գևորգի	կրտսեր գիտաշխ.		95.0
110.	Նալբանդյան Արման Ստեփանի	կրտսեր գիտաշխ.		95.0
111.	Վարդանյան Բենիկ Վարդանի	կրտսեր գիտաշխ.		95.0
112.	Խեչոյան Աննա Համլետի	կրտսեր գիտաշխ.		95.0
113.	Զարիկյան Նուշիկ Հակոբի	կրտսեր գիտաշխ.		95.0
114.	Հովսեփյան Ինեսա Վյաչեսլավի	կրտսեր գիտաշխ.		105.0
115.	Հմայակյան Մարգար Սիմոնի	կրտսեր գիտաշխ.	ա.գ.թ.	95.0
116.	Բաղալյան Հարություն Կոլյայի	կրտսեր գիտաշխ.		95.0
117.	Դավթյան Դավիթ Հարությունի	կրտսեր գիտաշխ.		95.0
118.	Ադամյան Սուսաննա Խաչատուրի	կրտսեր գիտաշխ.		110.0
119.	Մարգարյան Հասմիկ Սարգսի	կրտսեր գիտաշխ.		95.0
120.	Մաղաթյան Վարդիթեր Օնիկի	կրտսեր գիտաշխ.		95.0
121.	Ամիրխանյան Անժելա Վազգենի	կրտսեր գիտաշխ.		105.0
122.	Շամամյան Նարինե Ալբերտի	կրտսեր գիտաշխ.		105.0
123.	Սարգսյան Տիգրան Մանվելի	կրտսեր գիտաշխ.		50.0
124.	Մանուչարյան Նելլի Գեորգիի	կրտսեր գիտաշխ.		95.0
125.	Պողոսյան Աննա Կամոյի	կրտսեր գիտաշխ.		105.0
126.	Գալստյան Հասմիկ Հենրիկի	կրտսեր գիտաշխ.		105.0
127.	Մկրտումյան Լիլիթ Էդուարդի	կրտսեր գիտաշխ.		105.0

128.	Տանաջյան Լուսինե Ասատուրի	կրտսեր գիտաշխ.		105.0
129.	Ներսիսյան Սոնա Արաիկի	կրտսեր գիտաշխ.		105.0
130.	Բարսեղյան Սյուզաննա Սոսի	կրտսեր գիտաշխ.		105.0
131.	Հովհաննիսյան Կարեն Հովհաննեսի	կրտսեր գիտաշխ.		105.0
132.	Գրիգորյան Ավետիս Լորիկի	կրտսեր գիտաշխ.		105.0
133.	Համբարձումյան Զարուհի Լյովայի	կրտսեր գիտաշխ.		47.5
134.	Սարատիկյան Շուշանիկ Հրանտի	կրտսեր գիտաշխ.		47.5
135.	Աղանյան Թորգոմ Գրիգորի	կրտսեր գիտաշխ.	պ.գ.թ.	95.0
136.	Գաբրիելյան Արմինե Արարատի	կրտսեր գիտաշխ.		95.0
137.	Սահակյան Լիլիթ Արայիկի	կրտսեր գիտաշխ.		47.5
138.	Պապիկյան Քրիստինե Վահեյի	կրտսեր գիտաշխ.		95.0
139.	Հակոբյան Սմբատ Հակոբի	կրտ.գիտ.աշխ.		105.0
140.	Այվազյան Քրիստինա Միշայի	կրտ.գիտ.աշխ.		105.0
141.	Առաքելյան Սիրանուշ Շաքարի	կրտ.գիտ.աշխ.		105.0
142.	Ավետիսյան Լիաննա Գագիկի	կրտ.գիտ.աշխ.		105.0
143.	Հովսեփյան Ռուբեն Լեոնիդի	կրտսեր գիտ.աշխ.	պ.գ.թ.	105.0
144.	Ալեքսանյան Տիգրան Ալեքսանի	կրտսեր գիտ.աշխ.		95.0
145.	Մկրտչյան Արշալույս Ստյոպայի	ծրագրավ.		110.0
146.	Մխիթարյան Նարինե Էմիլի	ճարտարապետ	ճ.գ.թ.	50.0
147.	Հախվերդյան Արտակ Սևանի	ճարտարապ.		105.0
148.	Տեր-Մինասյան Լիլիթ Ռազմիկի	ճարտարապ		95.0
149.	Մինասյան Լիլիթ Արայի	ճարտարապ.-		90.0
150.	Աղայան Սոսե Հայկազի	ճարտարապ.-		90.0
151.	Դանիելյան Հենրիկ Ավագի	ավ. լաբ.-հետ.		90.0
152.	Ամիրյան Մարիամ Արմենի	ավ. լաբ.-հետ.		90.0
153.	Աղիկյան Լևոն Ալբերտի	ավ. լաբ.-հետ.		90.0
154.	Հարությունյան Տաթևիկ Էդվարդի	ավ. լաբ.-հետ.		90.0
155.	Հայդոսյան Հայկ Ավետիքի	ավ. լաբ.-հետ.		78.0
156.	Գյուլամիրյան Հայկ Արմանի	ավ. լաբ.-հետ.		90.0
157.	Վանյան Լիլիթ Ալֆոնսի	ավ. լաբ.		78.0
158.	Մարտիրոսյան Արսեն Աշոտի	ավ. լաբ.-հետ.		90.0
159.	Մուրադյան Սյուզաննա Ռաֆիկի	ավ. լաբ.-հետ.		78.0
160.	Գափոյան Արևիկ Սամվելի	ավ. լաբ.-		78.0
161.	Մանուկյան Լիլիթ Հայկարամի	ավ. լաբ.-հետ.		78.0
162.	Դիլանյան Ամալյա Հրաչի	ավ. լաբ.-հետ.		78.0
163.	Վանյան Աստղիկ Ալֆունսի	ավ. լաբ.-հետ.		78.0
164.	Ղազարյան Շուշանիկ Վաչագանի	ավ. լաբ.-հետ.		78.0
165.	Մարկոսյան Սալվինե Հակոբի	ավ. լաբ.-հետ.		90.0
166.	Անդրիկյան Արման Գևորգի	ավ. լաբ.-հետ.		40.0
167.	Հակոբյան Գայանե Լևոնի	ավ. լաբ.-հետ.		95.0
168.	Մանուկյան Սոնա Վարդանի	ավ. լաբ.-հետ.		78.0
169.	Սարգսյան Նարինե Ռուբիկի	ավ. լաբ.-հետ.		78.0
170.	Խուրշուդյան Սաթենիկ Ռշտունու	ավ. լաբոր.		78.0
171.	Երանոսյան Արզամ Ալեքսանի	ավ. լաբ.-հետ.		47.5
172.	Գրիգորյան Գարեգին Ավագի	ավ.լաբ. հետ.		78.0
173.	Շահմուրադյան Մարիամ Սամվելի	ավ. լաբորանտ		78.0
174.	Չալիկյան Կարո Գրիգորի	ֆոնդապահ		115.0
175.	Իսահակյան Տիգրան Ռաֆայելի	վերականգնող		78.0
176.	Բարոյան Դավիթ Էդուարդի	վերականգնող		85.0

177.	Ավետիսյան Արևիկ Արմենակի	վերականգնող		78.0
178.	Սահակյան Անի Երջանիկի	գրչագրող		85.0
179.	Հակոբյան Վռամ Լևոնի	լուսանկարիչ		72.8
180.	Լևոնյան Տիգրանուհի Ատոմի	համակարգ. մասն.		78.0
181.	Դանիելյան Անահիտ Վոլոդյայի	համակարգ. մասն.		78.0
182.	Գաբրիելյան Արարատ Բալաբեկի	ծրագրավորող		100.0
183.	Հովհաննիսյան Նունե Կառլենի	Գրադարանավ.ար		90.0
184.	Գյուլբուդաղյան Արուսյակ Առաքելի	գրադարանավար		85.0
185.	Խաչատրյան Աշոտ Գևորգի	վարորդ		85.0
186.	Ղլիջյան Ռուբեն Օնիկի	բանվոր		72.8
187.	Ղազարյան Գոհարիկ Մուշեղի	պահակ		72.8
188.	Թամամյան Լիլիթ Հայկի	պահակ		78.0
189.	Վիրաբյան Մանվել Արտավազդի	պահակ		72.8
190.	Սիվասյան Մեդրակ Ռոբերտի	պահակ		78.0
191.	Չաքարյան Նվարդ Հակոբի	հավաքարար		72.8
192.	Մկրտչյան Հասմիկ Սուրենի	հավաքարար		72.8
193.	Թամամյան Լուսինե Հայկի	հավաքարար		78.0
194.	Սուքիասյան Գոհարիկ Գուրգենի	հսկիչ (Դվին)		78.0
195.	Բաղդասարյան Արծրուն Նորիկի	հսկիչ (Արտաշատ)		78.0
196.	Թաքիրյան Գագիկ Խաչիկի	հսկիչ (Արմավիր)		72.8
Ընդամենը				241754.4

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Պավել Ավետիսյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կազմակերպության անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ _____ (Ժանետա Սանթուրյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կ.Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Պավել Ավետիսյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)